ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 14-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածի դրույթներով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, ինչպես նաև հաշվի առնելով, որ բնակելի տունը,դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ,իսկ առկա շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հիմք ընդունելով <<ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ն կողմից չափագրված շինությունների և հողամասի հատակագծերը և Նաիրի Ռաշիդի Քոչարյանի /մուտք 16.02.2021թ. թիվ 37/ դիմումը՝ որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Շամուտ գյուղի կադաստրային քարտեզի 06-085-0005 ծածկագրից առանձնացված 0.03423 հա մակերեսով բնակավայրերի բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1999թ. կառուցված 219.9քմ մակերեսով բնակելի տան,108.6քմ մակերեսով բաց պատշգամբի և 44.4քմ մակերեսով անասնագոմի նկատմամբ ճանաչել Նաիրի Ռաշիդի Քոչարյանի /ծնվ. 21.07.1976թ../ սեփականության իրավունքը:
2 Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Շամուտ, 1-ին փողոց, տուն 33:
4. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

2021 թ. փետրվարի 18
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 15-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,46-րդ հոդվածի 2-րդ կետով ,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2020թ. հունվարի 17-ի <<Թումանյան համայնքի 2020թ. բյուջեն հաստատելու մասին>> թիվ 2 -Ն և Թումանյան համայնքի ղեկավարի 2021թ. հունվարի 22-ի <<Թումանյան համայնքի 2021թ. բյուջեի եռամսյակային համամասնությունները սահմանելու մասին>> թիվ 5 -Ա որոշումները՝ որոշում եմ.

1.Թումանյանի համայնքապետարանի բյուջեի կառավարման ապարատի կենցաղային և հանրային սննդի նյութեր ծախսերից /հոդված 4267/ հատկացնել 32000 դրամ՝ Ս/թ փետրվարի 20-ին խաչքարերի բացման արարողության կազմակերպման և հյուրասիրության համար՝համաձայն 01.02.2021թ. թիվ 15 պայմանագրի:
2.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ե. Շաքարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

2021թ. փետրվարի 19
ք.Թումանյան